ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 205 - Ա

04 մարտի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 252-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 15-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 18-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 2-ի N37/6-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N252-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

   1)<<Սարգսյան Նազելի/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> բառերը փոխարինել <<Վարդանյան Արմինե Մերուժանի/ վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ /-երեք տարի ժամկետով>> բառերով.

   2)<<Բաղալյան Լիլիթ/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> բառերը փոխարինել <<Մալխասյան Գոհար Հովհաննեսի/ վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ /-երեք տարի ժամկետով>> բառերով.

   3)<<Հովհաննիսյան Անահիտ/ՏԻՄ ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել <<Սաղաթելյան Վահե Վոլոդյայի/ՏԻՄ ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերով

   4)<<Ներսիսյան [illegible]նա/ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել <<Հայրոյան Նաիրա [illegible]/ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերով

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

Ռ. Գրիգորյան

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ